ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՏԱՇԻՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ
ԹԱՇՏՈՆԱԿԵՐԸ

ОРГАН ТАШИРСКОГО
РАЙСОВЕТА ДЕПУТАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Արածագ
„Аревацаг"

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
1965 ԹՎԱԿԱՆԻՑ

ՇԱԲԱԹ
21 ՄԱՐՏԻ
1992 Թ.

ԹԻՎ 5 (3926)

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

ՀՈՒՍԱԴՐՈՂ ՍԿԻԶԲ

Օրերս անցկացվեց Տաշիրի մանկապատանեկան մարզական դպրոցի բոնցքամարտի խմբերի անդրանիկ առաջնությունը։ Անհրաժեշտ է նշել, որ այդ մարզաձևը շրջանում հիմնադրվել է երեսդամենը մեկ տարի առաջ։

Երիտասարդ մարզիչներ, սպորտի վարպետներ Հովիկ Սաքանյանի և Արմեն Դիլբարյանի ջանքերով ձևավորվել

ՄԵՐՋԱԿԱՆ ԿՅԱՆՔ

են բոնցքամարտի 4 խմբեր՝ շուրջ 100 մարզիկներով։ Կարճ ժամանակամիջոցում մարզիչները ձեռնամուխ եղան գույքի ձեռքբերմանը և մարզիկներին տեխնիկա — տակտիկական հնարքների ուսուցմանը։ Նրանց ջանադիր աշխատանքի շնորհիվ այսօր մեր պատանի մարզիկները տիրապետում են մարզաձևի գաղտնիքներին, որը պարզորոշ երևաց մրցումների ժամանակ։

Շրջանային ՆԳ բաժնի մարզադահլիճում երկու օր շարունակ իրենց ուժերը չափեցին տարբեր քաշային կարգերի 52 մարզիկներ։ Նրանք բոլորն էլ գործում էին կարգապահ, բոնցքամարտիկին վայել պահվածքով։ Ըստ քաշային կարգերի հաղթողներ դարձան Օթար Սուլեյմանովը (28), Ռոբերտ Մուրադյանը (30), Սերոբ Դիլբարյանը (34), Գոռ Անտոնյանը (36), Նվեր Սուքիասյանը (38), Արգամ Մովսիսյանը (40), Ահարոն Սարգսյանը (42), Արթուր Մինասյանը (44), Արթուր Ղուկեյանը (46), Արթուր Աբգարյանը (50), Արմեն Նազարյանը (52), Կարեն Շահվերդյանը (54), Արսեն Զազյանը (57), Էդուարդ Մուրադյանը (60), Արտակ Խաչատրյանը (63), Հովսեփ Մակալյանը (66), Սեյրան Բարոյանը (74)։

Անհրաժեշտ է նշել, որ եզրափակիչ դուրս եկած մարզիկներին հաղթանակները հեշտությամբ չէին տրվում։ Ինչ խոսք, մեր ունեցած շենքային պայմանները, մարզադահլիճը, չեն համապատասխանում ժամանակի պահանջներին։ Առավել լավ ցուցանիշներ կունենայինք, եթե կարողանայինք ստեղծել բավարար պայմաններ։

Մրցումները ապահովված էին բժշկական անձնակազմով։ Մարզադպրոցի ղեկավարությունը լավ էր նախապատրաստել ստուգատեսային այդ միջոցառմանը։ Հաղթող մարզիկները պարգևատրվեցին շրջանային սպորտկոմիտեի կողմից սահմանված հուշանվերներով և պատվոգրերով։

Բոնցքամարտի շրջանի հավաքականը նախապատրաստվում է առաջիկայում ընկերական հանդիպումների ծրագրով հանդես գալու Գյումրի և Կիրովական քաղաքներում։ Մեր թիմի մրցակիցները կլինեն այդ քաղաքների մարզադպրոցների պատանի բոնցքամարտիկները։

Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ